
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Куда потечет азербайджанский газ?	4
Իրավիճակի փոփոխությունն Վասպիցում	7
Широкий охват мирного атома	11
Չինական ներթափանցումը Կենտրոնական Ասիա	16
Վասպից ծովի էներգետիկ ռեսուրսների հիմնախնդիրը	20
Վերականգնվող էներգետիկա. ընդհանուր վիճակագրական վերլուծություն	23
Новости ТЭК Южного Кавказа и Каспия (17 июня – 11 июля)	26

КУДА ПОТЕЧЕТ АЗЕРБАЙДЖАНСКИЙ ГАЗ?

Вокруг итогов российско-азербайджанских переговоров

3-4 июля состоялся официальный визит президента России Дмитрия Медведева в Баку. В ходе российско-азербайджанских переговоров на высшем уровне был достигнут ряд договоренностей, касающихся межгосударственного сотрудничества в культурной, военно-технической и энергетической сферах.

В ходе переговоров на высшем уровне было подписано несколько документов, касающихся российско-азербайджанских отношений:

- Декларация о дружбе и стратегическом партнёрстве между Российской Федерацией и Азербайджанской Республикой,
- Соглашение между Министерством иностранных дел Российской Федерации и Министерством иностранных дел Азербайджанской Республики о сотрудничестве в области архивного дела,
- Меморандум между Министерством внутренних дел Российской Федерации и Министерством внутренних дел Азербайджанской Республики о взаимодействии в области обеспечения охраны транзитных грузов,
- Соглашение между Федеральной таможенной службой (ФТС России) и Государственным таможенным комитетом Азербайджанской Республики о сотрудничестве в области борьбы с таможенными правонарушениями,
- Меморандум между Федеральным агентством по управлению государственным имуществом России и Государственным комитетом по управлению государственным имуществом Азербайджанской Республики о сотрудничестве в области приватизации государственного имущества и управления им.

Кроме Декларации о дружбе и стратегическом партнерстве, все остальные подписанные документы касаются регулирования отношений в сферах, которые не могут считаться важнейшими. По одной из центральных проблемных сфер российско-азербайджанских отношений – энергетике – никаких конкретных договоренностей между Баку и Москвой достигнуто не было. Хотя и газовые предложения Москвы, сделанные Азербайджану, заслуживают особого внимания, так как они могут стать типовыми и для других постсоветских газодобывающих государств.

Цена газа

Сопровождавший Дмитрия Медведева глава ЗАО «Газпром» Алексей Миллер объявил о начале переговоров относительно закупки российским концерном азербайджанского газа. «Газпром» готов покупать максимально возможный объем поставок», – подчеркнул Миллер. Алексей Миллер заявил, что «Газпром» готов скупать у Азербайджана столько газа, сколько тот готов будет продать, причем по рыночным же ценам. «Если цена нефти будет \$250, то цена на газ будет более \$1000 за тысячу кубометров. Кстати, мы сейчас в «Газпроме» пересмотрели прогноз на конец текущего года: по нашему прогнозу цена к концу 2008 года на газ в Европе превысит рубеж \$500 за тысячу кубометров», – заявил Миллер.

Напомним, что в прошлом году «Газпром», как и прочим в СНГ, предложил Азербайджану покупать российский газ по рыночным ценам. Тогда цена составляла \$235. Баку от импорта

газа отказался. Сегодня «Газпром» предложил Баку самому скупать азербайджанский газ по мировым ценам. Решение «Газпрома» о предложении «мировых цен» Азербайджану для многих экспертов было неожиданностью. Такой же неожиданностью было заявление «Газпрома» о том, что он отныне так будет работать не только с Азербайджаном, но и с другими газодобывающими государствами постсоветского пространства.

Изменения российского подхода к проблеме сотрудничества в сфере природного газа вызваны рядом объективных причин.

Экономические причины. Добыча газа в России не растет уже несколько лет, а внутреннее потребление ежегодно увеличивается на 3-5%. Сегодня на экспорт идет примерно 190 млрд кубометров газа из добываемых в России 650 млрд кубометров.

При сохранении сегодняшней тенденции, через 10 лет газа для поставок в Европу может вовсе не остаться. «Газпром» стремится выйти из положения не путем дорогостоящего освоения новых месторождений, в частности Ямальского и Штокмановского, а с помощью реэкспорта туркменского, а также азербайджанского, казахстанского и узбекского газа.

Политические причины. Последние несколько лет показали, что реализация западных энергетических проектов на постсоветском пространстве дала определенные результаты. Азербайджан получил возможность экспортировать природный газ, минуя территорию России. Туркменистан вскоре сможет выйти на южно-азиатский энергетический рынок или присоединиться к проекту Транскаспийского газопровода. В таких условиях позиции Москвы значительно пошатнулись. В том числе и в политической сфере, так как зависимость от российских путей прокачки энергетических ресурсов означает также и определенную степень если не политической зависимости, то взаимозависимости с Москвой. Предлагая постсоветским странам мировые цены для покупки газа, Москва, тем самым, решает вопрос сохранения традиционно высокого уровня политического взаимодействия с постсоветскими государствами.

Новая ценовая политика России вызвана также необходимостью заполнения строящегося газопровода «Южный Поток» по дну Черного моря. Самого российского газа для заполнения газопровода явно недостаточно. И тут важно получить недостающие объемы из Азербайджана и Центральной Азии. Главное здесь не заработать, тут важно поддержать проект, который в чем-то очень похож на западные энергетические проекты в регионе: в нем больше политической экономии, чем непосредственно экономики.

Что решит Азербайджан?

В самом Баку во время российско-азербайджанских переговоров ничего непосредственно касающегося энергетики и экспорта газа решено не было. Дмитрий Медведев заявил: «Есть перспективы новых соглашений в сфере торговли углеводородами максимально использовать тот потенциал, который у нас накоплен. Я думаю, что это тоже будет в будущем одним из примеров нашей экономической кооперации. Наши экономики граничат друг с другом, они взаимодополняемы, и мы действительно работаем по всему треку этих отношений. Для нас не существует проблем транзита. Мы работаем друг с другом, и в этой непосредственной близости есть огромные геополитические преимущества». Это заявление российского президента довольно оптимистично и намекает на наличие в России надежд на то, что Баку примет довольно выгодное предложение ЗАО «Газпром».

Пока никаких официальных заявлений с азербайджанской стороны о принятии российских предложений не было. На экспертном уровне высказываются больше одобрительные, нежели критические оценки предложений, сделанных российской стороной.

Так, известный азербайджанский журналист Наир Алиев считает, что «Азербайджан ничем не рискует, если будет продавать газ России, поскольку «Набукко» пока не работает. Но Баку не будет отказываться от сотрудничества с Европой и Америкой, в том числе по альтернативным газопроводам». Одобрительные оценки российским предложениям были опубликованы в крупнейшем электронном СМИ Азербайджана – ИА Day.Az. Основным критиком Москвы выступил бывший советник президента Азербайджана В.Гулузаде, который предложил не доверять Москве.

Вероятнее всего, в скором времени Баку не даст официального ответа предложениям России. Уже начатые переговоры с ЗАО «Газпром» продлятся до конца года, и их положительный или отрицательный исход зависит от ряда факторов неэкономического характера. Многое будет зависеть от хода президентских выборов в Азербайджане, поствыборных процессов в этой стране и, может быть, процесса нагорно-карабахского урегулирования. Надо отметить, что самому Ильхаму Алиеву сегодня очень важна поддержка России перед президентскими выборами, которые станут хорошей ареной схватки между азербайджанскими политическими силами. Это, скорее всего, скажется на переговорах между ГНКАР и ЗАО «Газпром» о закупках азербайджанского газа.

Севак Саруханян
Фонд «Нораванк»

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՍՊԻՑՈՒՄ

Ադրբեջանա-թուրքմենական էներգետիկ համագործակցության հեռանկարը

Հուլիսի 3-5-ը տեղի ունեցավ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի պաշտոնական այցելությունը Բաքու և Աշգաբադ: Ղազախստան, Չինաստան, Գերմանիա ու Բելառուս կատարած այցելություններից հետո պաշտոնական Մոսկվայի որոշումը՝ նախագահի մակարդակով այցելություն կազմակերպել Ադրբեջան և Թուրքմենստան, ոչ միայն ի ցույց է դնում այն կարևորությունը, որը տրվում է Կրեմլում՝ կապված այդ երկու երկրների շուրջ ընթացող զարգացումների հետ, այլև վկայում է, որ Մոսկվայում հատկապես հետաքրքրված են Բաքու-Աշգաբադ գծում ի հայտ եկող զարգացումներով:

Ադրբեջանա-թուրքմենական հարաբերությունների ջերմացում

Ադրբեջանա-թուրքմենական հարաբերությունները մուտք են գործել նախորդ մեկ ու կես տասնամյակի կտրվածքով աննախադեպ ջերմացման մի ժամանակաշրջան, որի հետևանքները, սակայն, դժվար թե սահմանափակվեն միայն երկու երկրներին առնչվող զարգացումներով՝ զգալիորեն փոխելով ոչ միայն ԽՍՀՄ փլուզումից հետո Կասպիցում առաջացած աշխարհաքաղաքական փոխդասավորվածությունը, այլև նոր գործընթացների պատճառ հանդիսանալով եվրասիական էներգետիկ դաշտում:

Մայիսի 19-20-ը Բաքվում էր Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը: Թեև նախագահ Ալիևի հետ կայացած բանակցությունների արդյունքում կողմերը որևէ կոնկրետ պայմանավորվածության վերաբերյալ հայտարարությամբ հանդես չեկան, բայց հաշվի առնելով նախորդ տարիների ադրբեջանա-թուրքմենական բավական բարդ փոխհարաբերությունները՝ երկու երկրների համար հակասությունների առարկա խնդրի գինը¹, Բերդիմուհամեդովի այցը ցույցի է, որ Բաքվի ու Աշգաբադի հարաբերություններում «ճեղքում» է գրանցվել. հարցը, սակայն, այն է, որ նմանատիպ «ճեղքում» կարող էր գրանցվել միայն ավելի թանկ գին ունեցող պայմանավորվածության հետևանքով, որը կարող է գոնե առժամանակ մի կողմ դնել ադրբեջանա-թուրքմենական հայտնի հակասությունները:

Մյուս կողմից, երկրորդ կարևոր հետևությունը պետք է այն լինի, որ դժվար թե այդ պայմանավորվածությունն առնչվում է միայն երկու երկրներին. ո՛չ Ադրբեջանը և ո՛չ էլ Թուրքմենստանը չունեն այն քաղաքական ու տնտեսական հնարավորությունները, որ հանդես գան միմյանց համար այդչափ գրավիչ առաջարկով:

Չնայած գրեթե պարզ է, թե ով կարող է կանգնած լինել ադրբեջանա-թուրքմենական «ճեղքման» հետևում, սակայն առաջիկա ամիսներին ենթադրվող էներգետիկ, տնտեսական ու ի վերջո՝ աշխարհաքաղաքական զարգացումները ոչ միայն կարող են լրջորեն փոխել իրավիճակը Հարավային Կովկաս-Կասպից-Կենտրոնական Ասիա գծում, այլև պարզորոշ տալ նաև այդ հարցի պատասխանը:

Լուրջ հիմքեր են առաջանում ենթադրելու, որ Խորհրդային Միության փլուզումից ի վեր անհեռանկարային, անգամ անիրատեսական համարվող «Անդրկասպյան գազամուղը» (*«Transcaspian pipeline»*), որը Թուրքմենստանից միանալով Ադրբեջանին՝ պետք է առաջին հերթին թուրքմենական բնական գազը հասցնի Եվրոպա, ի վերջո կարող է իրականություն դառնալ: Եթե Բերդիմուհամեդովի՝ 2007թ. սեպտեմբերին ու նոյեմբերին տեղի ունեցած այցե-

¹ Երկու պետությունները հակասություններ ունենին, որոնք մինչ օրս էլ լուծված չեն՝ կապված Կասպից ծովի բաժանման ու Կասպիցում գտնվող «Սարդար» (Բաքուն այն կոչում է «Քյափազ») նավթահանքի պատկանելության վերաբերյալ, ուր առկա նավթի պաշարները գնահատվում են մոտ 100 միլիոն տոննա:

ըր Նյու Յորք ու Բրյուսել բնութագրվեցին որպես սովորական՝ ընդամենը դիվանագիտական նվազագույն օրակարգ ունեցող հանդիպումներ (ի տարբերություն ռուսական ու չինական ուղղությունների)¹, ապա միանգամայն այլ կարգի նորություն էր պաշտոնական Աշգաբադի որոշումը՝ հանձնարարել բրիտանական «Gaffney, Cline & Associates Ltd.» ընկերությանը իրականացնել Թուրքմենստանի բնական գազի հանքերի առաջին անկախ աուդիտը՝ պարզելու թուրքմենական կապույտ վառելիքի իրական ծավալները²: Նշենք, որ նման աուդիտ չի անցկացվել Թուրքմենստանի անկախությունից ի վեր, իսկ միջազգային պրակտիկայում գազահանքերի աուդիտը սովորաբար նախորդում է պայմանագրերի կնքմանը:

Այս ենթադրությունը հաստատվեց արդեն հաջորդ ամիս, երբ 2008թ. ապրիլի 9-10-ը Աշգաբադում էր Եվրամիության արտաքին հարաբերությունների հանձնակատար Բենիտա Ֆերերո-Վալդերի գլխավորած պատվիրակությունը: Ամերիկյան աղբյուրները նշում են, որ Թուրքմենստանի մայրաքաղաքում կայացած հենց այդ բանակցությունների ժամանակ էլ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը խոստացել է եվրոպացիներին 2009-ից տարեկան ԵՄ արտահանել 10 մլրդ մ³ բնական գազ՝ շրջանցելով Ռուսաստանը: Փաստն այն է, որ արդեն ս.թ. մայիսի 26-ին Եվրամիության մեկ այլ հանձնակատար՝ էներգետիկայի գծով պատասխանատու Անդրիս Պիեթրալզը, Աշգաբադում փոխըմբռնման հուշագիր ստորագրեց էներգետիկ համագործակցության վերաբերյալ:

Ներկայացվածի ֆոնին էր, որ մայիսի 19-20-ը տեղի ունեցավ Թուրքմենստանի նախագահի այցը Բաքու: Ինչպես նշվեց, հաշվի առնելով Ադրբեջան Բերդիմուհամեդովի այցելության փաստը և դրան նախորդած ադրբեջանա-թուրքմենական հարաբերությունների բարելավման մասին վկայող ևս երկու իրադարձություններ՝

- 2008թ. մարտի 21-ին հայտնի դարձավ, որ Թուրքմենստանի նախագահը նշանակել է Ադրբեջանում Աշգաբադի նոր դեսպան, ով արդեն ապրիլի 8-ին իր հավատարմագրերն է հանձնել Իլհամ Ալիևին (Թուրքմենստանը Բաքվում դեսպան չունեց 2001թ. ի վեր),
- մայիսի 19-ին հայտարարվեց, թե Ադրբեջանն ի վերջո մարել է դեռևս 1992-ից Թուրքմենստանին ունեցած շուրջ \$45 մլն-ոց պարտքը, ինչը չէր անում նախորդ 16 տարիների ընթացքում,

կարելի է, անշուշտ, բավական հիմնավորված խոսել Ադրբեջանի ու Թուրքմենստանի հարաբերություններում տեղի ունեցած լուրջ առաջընթացի մասին, սակայն այս պարագայում կարևորն այն է, որ այդ փոփոխությունն առաջին հերթին վկայում է «Անդրկասպյան գազամուղի» կառուցման հավանականության աննախադեպ մեծացման մասին³:

Առնչություններ Հայաստանի անվտանգությանը

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեր երկրի համար այս դեպքում, թերևս, ոչ այնքան կարևոր են աշխարհաքաղաքական զարգացումները, որքան այն հանգամանքը, որ Ադրբեջանը կարծես թե մուտք է գործում էներգետիկ նոր բումի մի շրջան, երբ թուրքմենա-ադրբեջանական ուղղությամբ ենթադրվող զարգացումները սպասվող նորությունների միայն մի

¹ 2007թ. մայիսի 12-ին Թուրքմենստանի Թուրքմենբաշի նավահանգստային քաղաքում կնքված ռուս-դազախա-թուրքմենական համատեղ պայմանագրի համաձայն, կառուցվելու է Թուրքմենստանը Ղազախստանի տարածքով Ռուսաստանին կապող նոր գազամուղ՝ «Մերձկասպյան գազամուղը»: Բացի այդ, 2007թ. նոյեմբերի 22-ին Բերդիմուհամեդովը հայտարարեց, թե արդիականացվելու է Թուրքմենստանը Ռուսաստանին կապող գործող գազամուղը, որպեսզի նրա թողունակության ծավալը հասնի տարեկան 83 մլրդ մ³՝ գրեթե երկու անգամ ավելի ներկա հնարավորությունից: Ինչ վերաբերում է թուրքմենա-չինական գազային համագործակցությանը, ապա ներկայում ընթացքի մեջ է Ուզբեկստանի ու Ղազախստանի տարածքով Թուրքմենստանը Չինաստանին միացնող գազամուղի շինարարությունը, որը պետք է ավարտվի 2009թ. և որը տարեկան Չինաստան պետք է հասցնի 30 մլրդ մ³ թուրքմենական բնական գազ:

² Այդ մասին հայտնի դարձավ 2008թ. մարտի 28-ին:

³ Միջազգային տարբեր գնահատականների համաձայն՝ Թուրքմենստանի բնական գազի պաշարները կազմում են 2.5-ից 7 տրլն մ³, և իր այդ ցուցանիշով Թուրքմենստանն աշխարհում գրավում է չորրորդ տեղը՝ Ռուսաստանից, Իրանից ու Կատարից հետո:

մասն են: Այլ կերպ ասած՝ օրինակ, այսօր Հայաստանի համար արդիական ադրբեջանական ռազմական ծախսերի մեծացման հարցը կարող է հանդես գալ էլ ավելի սուր ձևով:

Վերջին շրջանում Ադրբեջանին առնչվող գազային զարգացումները կենտրոնացած չեն միայն ադրբեջանա-թուրքմենական ուղղությամբ, և այս առումով հարկ է հատուկ կանգ առնել այն հանգամանքի վրա, որ առաջիկայում գազային ոլորտը Բաքվի համար նավթի վաճառքից հետո կարող է դառնալ եկամտի երկրորդ կարևոր աղբյուրը՝ միաժամանակ էլ ավելի մեծացնելով Ադրբեջանի աշխարհաքաղաքական կարևորությունը տարածաշրջանային աշխարհաքաղաքական գործընթացներում:

Ադրբեջանի գազային ոլորտում տեղի ունեցած հաջորդ կարևոր նորությունը վերաբերում է Կասպիցում գտնվող «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման երկրորդ փուլի մեկնարկի հետ: Արևմտյան աղբյուրների գնահատմամբ, այսօր «Շահ Դենիզի» բնական գազի պաշարները կազմում են մոտ 1.2 տրլն մ³, և այն համարվում է աշխարհում խոշորագույն գազահանքերից մեկը:

Դեռևս 2007թ. հոկտեմբերի 2-ին Ադրբեջանի արդյունաբերության և էներգետիկայի նախարար Նաթիք Ալիևը հայտարարեց, թե իր երկիրը պատրաստ է տարեկան 12 մլրդ մ³ բնական գազ արտահանել Եվրոպա՝ «*Nabucco*» գազամուղի միջոցով: Սակայն Ադրբեջանի գազային արտահանման հնարավորությունների գրեթե երկու անգամ աճի մասին նորությունն իր վրա նման ուշադրություն չէր հրավիրի, եթե արդեն այս տարի հայտնի չդառնար, որ Ռուսաստանն ու Իրանը բանակցությունների մեջ են՝ ադրբեջանական բնական գազը գնելու նպատակով: Այս տարվա մայիսի վերջին Բաքվում էր Իրանի նավթի փոխնախարար ու իրանական «*National Iranian Gas Co*» ընկերության նախագահ Ռեզա Քասանգադեն, ով այդ նպատակով մի շարք հանդիպումներ ունեցավ իր ադրբեջանցի գործընկերների հետ: Իսկ արդեն հունիսի 2-ին Բաքվում «*Газпром*»-ի վարչության նախագահ Ալեքսեյ Միլլերի ու նախագահ Իլհամ Ալիևի միջև կայացած բանակցությունների արդյունքում հայտնի դարձավ, որ Ադրբեջանին նույն առաջարկությամբ է դիմել նաև ռուսական կողմը, ընդ որում՝ 1000 մ³ ադրբեջանական գազի դիմաց առաջարկելով եվրոպական գին՝ \$360:

Եթե Իրանը խնդիր ունի գազով ապահովել իր հյուսիսային մարզերը¹, իսկ ռուսների դեպքում էլ նպատակ կա ամեն կերպ կանխել Ռուսաստանը շրջանցող գազային հոսքերի մուտքը Եվրոպա (դրա համար էլ «*Газпром*»-ը Բաքվին առաջարկել է նման բարձր գին), ապա մեր պարագայում գլխավոր հետևությունը պետք է այն լինի, որ 2011-ից սկսած, երբ պետք է մեկնարկի «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման երկրորդ փուլը, Ադրբեջանը կունենա եկամտի նոր, լուրջ աղբյուր²:

Եվ վերջապես, Ադրբեջանի գազային ոլորտին առնչվող երրորդ ուշագրավ նորությունը Իրանի պատրաստակամությունն է՝ միանալ այսպես կոչված «White Stream» («Սպիտակ հոսք») գազամուղին, որը ենթադրաբար պետք է հանդիսանա «Անդրկասպյան գազամուղի» շարունակությունը և Ադրբեջանը Վրաստանի ու Սև ծովի հատակով միացնի Ուկրաինային: 2008թ. փետրվարի 9-ին Բաքվում հրավիրված մամուլ ասուլիսի ժամանակ Ադրբեջանում Իրանի դեսպան Նասիր Գամիդի Զարեն հայտարարեց, թե իր երկիրը քննարկում է նշված գազամուղի շինարարությանը միանալու հարցը:

¹ Այս տարվա հունվարի 1-ից Թուրքմենստանը դադարեցրեց գազի վաճառքը Իրանին՝ պահանջելով, որ այն 1000 մ³-ի դիմաց վճարի \$150՝ ինչպես Ռուսաստանը պետք է վճարի նույն ծավալի թուրքմենական գազի դիմաց այս հուլիսի 1-ից, այլ ոչ թե նախկինի նման շարունակի վճարել \$100: Ամեն տարի Իրանը Թուրքմենստանից ներմուծում էր 8 մլրդ մ³ բնական գազ՝ գլխավորապես իր հյուսիսային մարզերի համար:

² Օրինակ, 2008թ. փետրվարի 11-ին Ադրբեջանի արդյունաբերության և էներգետիկայի նախարար Նաթիք Ալիևը հայտարարեց, թե Թուրքիային ու Եվրոպային վաճառվող ադրբեջանական բնական գազի 1000 մ³-ի գինը առաջիկայում Բաքուն \$120-ից հասցնելու է \$300-ի:

Հետևություններ

Հիմնական հետևությունն այն է, որ նկատվող ադրբեջանա-թուրքմենական ջերմացումն ի վիճակի է լուրջ փոփոխություններ առաջացնել կասպյան աշխարհաքաղաքական փոխդասավորվածությունում՝ ամենևին էլ չսահմանափակվելով էներգետիկ ոլորտով: Եվ այդ առումով, Մեդվեդևի այցելությունը Բաքու և Ազգաբաղ պետք է դասել առաջիկայում Կասպիցի շուրջ ենթադրվող նոր ուշագրավ զարգացումների շարքին:

Մյուս կողմից, հատկապես Հայաստանի մասով հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ եթե մինչև 2007թ. Ադրբեջանն անգամ ստիպված էր իր կարիքների համար գազ ներմուծել Ռուսաստանից, սակայն այսօր արդեն առկա իրողությունները թույլ են տալիս ենթադրել, որ առաջիկայում Բաքուն կարող է դառնալ գազի միջազգային շուկայի առնվազն միջին կարգի դերակատար: Գլխավոր ինտրիգը, սակայն, առնչվում է ադրբեջանա-թուրքմենական զարգացումներին, քանի որ հենց «Անդրկասպյան գազամուղի» հեռանկարից է կախված ողջ ադրբեջանական գազային ծրագրերի ապագան, և առանց թուրքմենական գազի ներդրումներն Ադրբեջանի գազային ոլորտում դժվար թե կրեն ռազմավարական բնույթ:

*Մարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ*

ШИРОКИЙ ОХВАТ МИРНОГО АТОМА

Развитие мощностей атомной энергетики в мире происходит в нарастающем темпе и свидетельствует о подобию мирового консенсуса по вопросу целесообразности развития мирных атомных мощностей, с соблюдением, в первую очередь, всех необходимых параметров безопасности такого развития¹.

Бум мирного атома, охвативший страны всех континентов, до этого и не имевших серьезных планов по развитию на своей территории отрасли атомной энергетики, связан со многими объективными обстоятельствами. К последним, в частности, можно отнести два параллельных процесса, имеющих, с нашей точки зрения, одно из важнейших значений и характеризующихся на встречах треках интересов стран-производителей технологий мирного атома и стран-реципиентов (получателей) последних.

К этим объективным данностям относятся: 1) возрастающие потребности стран мира в удовлетворении своих энергетических нужд, соседствующие с процессами истощения традиционных мировых энергоресурсов (прежде всего, нефти); 2) наступательная «дипломатия мирного атома» стран-производителей атомных технологий, позволяющая им с благоприятной стартовой площадки ядерного характера укрепить свои позиции в отношении со странами-реципиентами технологий мирного атома и тем самым сформировать вокруг себя «круги мирного атомного влияния» в перспективе отношений с этими странами.

Мировые масс-медиа со ссылкой на международные структуры в сфере атомных технологий (в первую очередь, Международное агентство по атомной энергии, МАГАТЭ) отмечают количественные и географически пространственные рамки охвата мирового бума мирного атома. Так, отмечается, что около 40 стран Ближнего Востока, Африки и Латинской Америки намерены в ближайшие годы начать реализацию собственных программ развития мирного атома. По данным МАГАТЭ, которые приводит газета «*Washington Post*», в списке желающих развивать ядерную энергетику – африканские страны (Намибия, Нигерия) и, по меньшей мере, шесть бывших советских республик. В ближайшие десять лет Турция планирует построить три атомные станции, а Египет – четыре. Кроме того, строительство атомных электростанций планируют ОАЭ, Кувейт, Бахрейн, Ливия, Алжир, Марокко, Иордания и Йемен².

Географический охват стремления стран-реципиентов технологий мирного атома строить и развивать свои атомно-энергетические мощности впечатляет – от стран Латинской Америки до стран Юго-Восточной Азии.

В марте 2008г. Министр промышленности и энергетики Уругвая Даниэль Мартинес заявил о намерении развивать атомную энергетику, использование которой в настоящее время в

¹ «Мирное использование атомной энергии давно вышло за рамки дискуссионной проблемы. Атомная энергия – единственный внебиосферный источник энергии, доступный человечеству... Синдром чернобыльской катастрофы к настоящему времени преодолен... Многообразие возможностей атомной энергетики сегодня является противовесом углеродному топливному циклу, который в самом успешном случае разработки чистых технологий будет порождать миллионы тонн отходов. Для стабилизации потребления органического топлива имеет смысл развитие в следующем веке крупномасштабной ядерной энергетики, превышающей примерно на порядок мощность современной ядерной энергетики. Предполагается, что после длительной контролируемой выдержки 200 лет с достижением или приближением к радиационно-миграционной эквивалентности отходы могут быть окончательно захоронены в отработавших и рекультивированных урановых рудниках или в геологических хранилищах с восстановлением природного радиационного равновесия» (Фотин В.П., Перспективы атомной энергетики, <http://www.vei.ru/public/fotin3/fotin3.htm>).

² Николай Сурков. Сорок стран хотят построить АЭС // «Независимая газета», 15 мая 2008г.

стране законодательно запрещено: «Возглавляемое мной министерство намерено вынести на обсуждение в обществе тему использования атомной энергии в мирных целях. Я выступаю за строительство в Уругвае атомной электростанции». По его словам, строительство станции обойдется «невероятно дешево», к тому же современные технологии позволяют обеспечить полную безопасность ее эксплуатации и утилизацию отходов «без нанесения вреда будущим поколениям»¹.

В апреле 2008г. активность в сфере «дипломатии мирного атома» была зафиксирована на Африканском континенте. Так, министр энергетики и шахт Алжира Шакиб Хелиль заявил, что Алжир готов заключить с Россией соглашение о сотрудничестве в области атомной энергетики. По словам министра, подписание соглашения станет практическим шагом в реализации договоренностей между двумя странами, достигнутыми во время недавнего визита главы Алжира в Москву. Министр сообщил, что в Алжире создана законодательная база по использованию атомной энергии в мирных целях. Алжир планирует построить к 2018г. атомную электростанцию. Известно, что Алжир заключил соглашения о сотрудничестве в сфере мирного использования атома с США, Францией, КНР, Аргентиной и ЮАР².

В конце мая 2008г. газета «*Vietnam News*» сообщила, что правительство Вьетнама планирует начать геологоразведочные работы по урану в целях производства ядерного топлива для первой в стране атомной станции мощностью 4000 МВт, которая может быть пущена в эксплуатацию к 2020г. Министерство природных ресурсов и окружающей среды страны получило задание провести оценку запасов урана в районе Нонг Сон центральной провинции Куанг Нам, где предположительно находятся самые крупные запасы урановой руды во Вьетнаме, а также в других регионах страны³.

Таким образом, анализ мировых тенденций развития мировой энергетики показывает, что имеет место поступательно-устойчивый переход энерговырабатывающих мощностей большого числа стран мира на «рельсы» мирного атома.

Общая неустойчивость мировой системы на нынешнем этапе, региональная напряженность во всех потенциальных точках нового строительства и развития мощностей мирного атома диктуют определенную этапизацию развития мирного атома в XXI веке с позиций обеспечения безопасности ядерного топливного цикла и его эффективности в вопросе решения предстоящего глобального энергетического вызова человечеству.

Значительный рост мирового энергопотребления является неизбежным в XXI веке, особенно в развивающихся странах. Глобальное потребление энергии, по всей видимости, удвоится к середине этого столетия, даже если исходить из очень низких темпов роста. Этот рост зависит от развития мировой экономики, роста населения и стремления к более равномерному распределению потребления энергии по регионам мира. Другим важным вызовом энергетики, который будет способствовать устойчивому развитию мирового сообщества, является использование водорода, производимого из воды с применением чистых источников первичной энергии. И, наконец, обеспечение пресной водой также потребует значительных источников энергии. Позитивному решению этих проблем будет способствовать развитие ядерной энергетики. Чтобы существенно повлиять в глобальном масштабе на производство энергии, энергетическую безопасность и улучшение экологической обстановки, производство ядерной энергии должно быть увеличено к середине века в 4–5 раз от ныне достигнутого. Наличие ядерных

¹ Уругвай хочет изменить отношение к запрещенной там атомной энергетике, РИА «Новости», <http://www.rian.ru/economy/20080314/101286481.html>, 14.03.2008.

В настоящее время в Латинской Америке по две атомные электростанции имеют Бразилия, Аргентина и Мексика. Использование атомной энергии в Уругвае запрещено законом от 1977 года.

² Алжир готов заключить с Россией соглашение о сотрудничестве в области атомной энергетики – Ш.Хелиль, Агентство экономической информации «Прайм-ТАСС», <http://www.prime-tass.ru/news/show.asp?id=776555&ct=news>, 17.04.2008.

³ Вьетнам планирует начать геологоразведочные работы на уран для нужд ядерной энергетики, http://www.nuclear.ru/rus/press/nuclear_cycle/2109889/, 30.05.2008.

мощностей такого масштаба поднимает очень важные вопросы относительно ресурсной обеспеченности топливом, обращения с отходами и распространения ядерного оружия. Очевидно, что при дальнейшем развитии ядерной энергетики необходимо обеспечить экономическую приемлемость и соблюдение критериев технической безопасности. Крупномасштабное развитие ядерной энергетики предполагает ее использование в большем числе стран, чем в настоящее время. Это ставит дополнительные задачи в ее развитии, учитывающие вопросы безопасности и нераспространения.

Достаточно условно можно представить следующие этапы развития ядерных технологий в XXI веке:

1. **Ближний** (10–20 лет), предполагающий эволюционное развитие атомных реакторов и технологий ядерного топливного цикла, разработку и опытную эксплуатацию улучшенных и инновационных технологий реакторов и топливного цикла;
2. **Период активного роста ядерной энергетики** (до середины столетия), включающий расширение мировых масштабов отрасли в 4–5 раз, освоение инновационных технологий реакторов и топливного цикла (расширенное воспроизводство топлива, замкнутый U - Pu и Th - U цикл, использование полезных и выжигание опасных изотопов, высокотемпературные реакторы, малые реакторы, производство водорода, опреснение воды);
3. **Период устойчивого развития крупномасштабной ядерной энергетики** (вторая половина столетия), в рамках которого происходит развертывание инновационных ядерных технологий, реализуются планы по многокомпонентной ядерной энергетике, внедряются технологии атомно-водородной энергетик¹.

Михаил Агаджанян

¹ *Н.Н. Пономарёв-Степной*, Роль атомной энергетики в структуре мирового энергетического производства XXI века и атомно-водородная энергетика // Журнал «Потенциал», 2005, № 4, <http://potential.org.ru/Phys/ArtDt200503051318PH4C1J3>.

Мощности мирного атома и требуемые объемы ядерного топлива
(по данным на 23 мая 2008г.)¹

	Генерация электроэнергии атомными мощностями (2006)		Действующие реакторы (май 2008)		Строящиеся реакторы (май 2008)		Планируемые реакторы (май 2008)		Требуемое количество ядерного топлива (2008)
	млрд. КВт-ч	Доля в общей генерации электроэнергии (%)	Число	Выработка электроэнергии (МВт)	Число	Планируемая выработка электроэнергии (МВт)	Число	Планируемая выработка электроэнергии (МВт)	Тонн урана
Argentina	7.2	6.9	2	935	1	692	1	740	123
Armenia	2.4	42	1	376	0	0	0	0	51
Bangladesh	0	0	0	0	0	0	0	0	0
Belarus	0	0	0	0	0	0	2	2000	0
Belgium	44.3	54	7	5728	0	0	0	0	1011
Brazil	13.0	3.3	2	1901	0	0	1	1245	303
Bulgaria	18.1	44	2	1906	0	0	2	1900	261
Canada	92.4	16	18	12652	2	1500	3	3300	1665
China ²	51.8	1.9	11	8587	7	6700	24	26320	1396
Czech Republic	24.5	31	6	3472	0	0	0	0	619
Egypt	0	0	0	0	0	0	0	0	0
Finland	22.0	28	4	2696	1	1600	0	0	1051
France	428.7	78	59	63473	1	1630	0	0	10527
Germany	158.7	32	17	20339	0	0	0	0	3332
Hungary	12.5	38	4	1826	0	0	0	0	271
India	15.6	2.6	17	3779	6	2976	10	8560	978
Indonesia	0	0	0	0	0	0	2	2000	0
Iran	0	0	0	0	1	915	2	1900	143
Israel	0	0	0	0	0	0	0	0	0
Japan	291.5	30	55	47577	2	2285	11	14945	7569
Kazakhstan	0	0	0	0	0	0	0	0	0
Korea (North)	0	0	0	0	0	0	1	950	0
Korea (South)	141.2	39	20	17533	3	3000	5	6600	3109
Lithuania	8.0	69	1	1185	0	0	0	0	225
Mexico	10.4	4.9	2	1310	0	0	0	0	246

¹ Источник: *World Nuclear Power Reactors 2006-08 and Uranium Requirements*, World Nuclear Association, <http://www.world-nuclear.org/info/reactors.html>, 23.05.2008.

² Данные по Тайваню приводятся отдельной строкой. В Тайване находится 6 действующих реакторов с общей мощностью генерации в 4884 МВт и 20% долей в общей выработке электроэнергии на острове. В настоящее время в Тайване строятся два реактора с общей планируемой мощностью в 2600 МВт.

	Генерация электроэнергии атомными мощностями (2006)		Действующие реакторы (май 2008)		Строящиеся реакторы (май 2008)		Планируемые реакторы (май 2008)		Требуемое количество ядерного топлива (2008)
	млрд. КВт-ч	Доля в общей генерации электроэнергии (%)	Число	Выработка электроэнергии (МВт)	Число	Планируемая выработка электроэнергии (МВт)	Число	Планируемая выработка электроэнергии (МВт)	Тонн урана
Netherlands	3.3	3.5	1	485	0	0	0	0	98
Pakistan	2.6	2.7	2	400	1	300	2	600	65
Romania	5.2	9.0	2	1310	0	0	2	1310	174
Russia	144.3	16	31	21743	7	4920	10	11960	3365
Slovakia	16.6	57	5	2064	2	840	0	0	313
Slovenia	5.3	40	1	696	0	0	0	0	141
South Africa	10.1	4.4	2	1842	0	0	1	165	303
Spain	57.4	20	8	7442	0	0	0	0	1398
Sweden	65.1	48	10	9016	0	0	0	0	1418
Switzerland	26.4	37	5	3220	0	0	0	0	537
Thailand	0	0	0	0	0	0	0	0	0
Turkey	0	0	0	0	0	0	0	0	0
Ukraine	84.8	48	15	13168	0	0	2	1900	1974
United Kingdom	69.2	18	19	11035	0	0	0	0	2199
USA	787.2	19	104	99049	0	0	12	15000	18918
Vietnam	0	0	0	0	0	0	0	0	0
<i>Всего в мире</i>	2658	16	439	371,989	36	29,958	93	101,395	64,615

ՉԻՆԱԿԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ

Ս.թ. հունիսի 24-ին ռուսական «Коммерсант» պարբերականը գրեց, թե Մոսկվան ու Աշգաբադը պայմանագիր են կնքել, ըստ որի՝ ռուսական կողմը Թուրքմենստանին է վաճառելու վեց հատ «Смерч» տեսակի հրետանահրթիռային համակարգեր՝ \$70 մլն ընդհանուր արժողությամբ: Թեև նշված գործարքը նշանակում է, որ 2006թ. դեկտեմբերին Թուրքմենբաշու մահվանից հետո պաշտոնական Աշգաբադը շարունակում է արտաքին քաղաքական ու անվտանգության ոլորտներում իր թիվ 1 գործընկերը տեսնել Մոսկվային, սակայն վերջին շրջանում Թուրքմենստանի շուրջ ընթացող էներգետիկ զարգացումների համատեքստում գործարքի կայացումը նաև ցուցիչ է, որ առաջիկա տարիներին Աշգաբադը շարունակելու է ռուսական ուղին դիտարկել որպես սեփական բնական գազի արտահանման առաջնային տարբերակ: Հուլիսի 4-ին Ռուսաստանի նախագահի՝ Աշգաբադ այցելության փաստը և Թուրքմենստանի նախագահի հետ նրա բանակցությունների արդյունքները նշված հետևության մեկ այլ հիմնավորումն են:

Սակայն այդքանով հանդերձ փաստն այն է, որ Թուրքմենստանում և ընդհանրապես Կենտրոնական Ասիայում տեղի է ունենում իրավիճակի փոփոխություն: Եթե ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած առաջին տասնամյակն ավարտվեց տարածաշրջանին առնչվող տարաբնույթ էներգետիկ նախագծերի ի հայտ գալով, ապա այս տասնամյակն, ըստ ամենայնի, կավարտվի նշված նախագծերի առնվազն մի մասի իրականացումով¹: Իսկ այդ հանգամանքը չի կարող իր ներգործությունը չունենալ տարածաշրջանում ուժային փոխդասավորվածության, հետևաբար՝ էներգետիկ հոսքերի ուղղությունների վրա: Թեև Ռուսաստանն ամենից մեծ կարողությունն ունի առաջիկայում Կենտրոնական Ասիայում որպես թիվ 1 դերակատար մնալու համար, և տարածաշրջանը միայն մեծացնելու է իր նշանակությունը ռուսական էներգետիկ ռազմավարությունում, սակայն այսօր ողջ ինտրիզն այն է, թե Միացյալ Նահանգների, Եվրամիության, Չինաստանի, Իրանի ու անգամ Պակիստանի ու Հնդկաստանի շարքում որ մեկը ձեռք կրերի Մոսկվայի հիմնական մրցակցի կարգավիճակը, ինչն ամեն դեպքում իր ազդեցությունը կունենա նաև Կենտրոնական Ասիային հարակից տարածաշրջանների աշխարհաքաղաքականության վրա:

Իրավիճակային դիտարկում

Չնայած ընդունված է համարել, որ կենտրոնաասիական էներգետիկ ոլորտ մուտք գործելու առավել ագրեսիվ ծրագրեր ունեն արևմտյան ընկերությունները և նշվածը հանդիսանում է տարածաշրջանում սեփական ազդեցությունը հաստատելու Միացյալ Նահանգների ու Եվրամիության աշխարհաքաղաքական նախագծի կարևոր բաղկացուցիչը², սակայն իրողու-

¹ Բրիտանական «British Petroleum» ընկերության ներկայացրած վերջին տվյալների համաձայն («BP Statistical Review of World Energy, June 2008»), 2007թ. ավարտին կենտրոնաասիական երեք պետությունների՝ Ղազախստան, Ուզբեկստան, Թուրքմենստան (զեկույցում դիտարկված չեն Ղրղըզստանի ու Տաջիկստանի տվյալները՝ վերջիններիս մոտ նավթագազային պաշարների բացակայության կամ աննշան լինելու պատճառով), նավթի ու բնական գազի պաշարները կազմել են, համապատասխանաբար, 41 մլրդ բարել (կամ աշխարհի նավթի պաշարների 3.3%-ը) և 6.31 տրլն մ³ (կամ աշխարհի բնական գազի պաշարների 3.6%-ը): Ներկայացված թվերը, սակայն, արևմտյան այլ հեղինակավոր աղբյուրները համարում են խիստ նվազեցված:

² Տպավորիչ վերջին օրինակն առնչվում է հունիսի 6-ին հրապարակված տեղեկությանը, թե ղազախական «KazMunaiGaz National Co» և ամերիկյան «Chevron Corporation» ընկերությունները պայմանավորվածության են հանգել կառուցելու մի նավթամուղ, որը Ղազախստանի «Թենգիզ» նավթահանքից կմիանա Ադրբեյջանի մայրաքաղաքից մեկնարկող «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղին, և որի

թյունն այն է, որ մինչ օրս Ռուսաստանից բացի, Կենտրոնական Ասիայից էներգակիրների փոխադրման գործում շոշափելի ձեռքբերումներ ունի միայն Չինաստանը և, որն էլ ավելի ուշագրավ է, կենտրոնաասիական վարչակազմերի հետ Պեկինի կոնկրետ պայմանավորվածությունների քանակը միայն աճում է՝ աստիճանաբար ներառելով նաև նավթագազային ոլորտից դուրս գտնվող ռազմավարական կարգի այլ բնագավառներ (ինչպես, օրինակ, տրանսպորտային ոլորտը):

Նավթամուղ

Անցած տարվա դեկտեմբերի 11-ին Ղազախստանում մեկնարկեց Կենկիյակ-Կումկոլ քաղաքներն իրար կապող նավթամուղի շինարարությունը: Առաջին հայացքից ներդադախական այդ նավթատարը կարևոր է նրանով, որ շարք մտնելուն պես այն պետք է ավարտին հասցնի Ղազախստանը Չինաստանին կապող տպավորիչ երկարություն ունեցող նավթատարի շինարարությունը: Մոտ երկուսուկես տարի առաջ՝ 2005թ. դեկտեմբերի 15-ին, շարք էր մտել Կենտրոնական Ասիան Չինաստանին միացնող առաջին նավթամուղը՝ այն դադախական Աթասու քաղաքը կապեց արևմտաչինական Ալաշանկու բնակավայրի հետ¹: Կենկիյակ-Կումկոլ նավթամուղի կառուցումից հետո Կասպիցի հատվածում գտնվող դադախական հիմնական նավթահանքերը Աթիրայու-Կենկիյակ-Կումկոլ-Աթասու-Ալաշանկու գծով մուտք կգործեն չինական շուկա: Նախատեսվում է, որ 2011-ից, երբ կավարտվի Կենկիյակ-Կումկոլ հատվածի շինարարությունը, այդ նավթամուղով օրական Չինաստան կառաքվի 1 մլն բարել նավթ: Եթե հաշվի առնենք, որ 2003թ. ի վեր Պեկինը սև ոսկու թիվ 2 ներկրողն է աշխարհում՝ ԱՄՆ-ից հետո, և, օրինակ, մայիսին Չինաստանն օրական ներմուծում էր 3.81 մլն բարել նավթ և մինչև 2011թ. այդ թիվն, ամենայն հավանականությամբ, կաճի, ապա 2011թ. դրությամբ միայն դադախական նավթը կարող է ապահովել ողջ Չինաստանի պահանջարկի առնվազն 25%-ը:

Գազամուղ

Արևմտյան աղբյուրների փոխանցմամբ, ներկայացվածից բացի, Պեկինն ու Աստանան արդեն սկզբունքային համաձայնության են հանգել Ղազախստանից դեպի Չինաստան ձգվող գազամուղի կառուցման շուրջ, որը պետք է անցնի վերոհիշյալ նավթամուղին զուգահեռ:

Սակայն Կենտրոնական Ասիայում Պեկինի գազային թիվ 1 նախագիծն առնչվում է Թուրքմենստանին: 2007թ. օգոստոսի 31-ին Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի ներկայությամբ հանդիսավոր պայմաններում մեկնարկեց Թուրքմենստան-Չինաստան գազամուղի շինարարությունը: Մի քանի ամիս անց՝ նույն թվականի դեկտեմբերի 28-ին, չինական նավթային հսկա «China National Petroleum Corporation»-ի («CNPC») դուստր ձեռնարկություններ հանդիսացող «PetroChina» և «China National Oil and Gas Exploration and Development Corporation» ընկերությունները հայտարարեցին, թե միասին հատկացնելու են մոտ \$2.2 մլրդ՝ կառուցելու Թուրքմենստան-Չինաստան գազամուղի չինական հատվածը: Նախատեսվում է, որ ավելի քան 9 250 կմ երկարություն ունեցող գազամուղի շինարարությունը կարժենա մոտ \$13.6 մլրդ և պետք է ավարտվի 2009թ. վերջին, որից հետո 30 տարվա ընթացքում յուրաքանչյուր տարի Թուրքմենստանից Չինաստան կհոսի 30 մլրդ մ³ բնական գազ: Ավելացնենք նաև, որ 2007թ. վերջին «CNPC»-ը պայմանավորվածություն ձեռք բերեց Ազգաբաղի հետ, որի համաձայն՝ չինական ընկերությունը գնեց թուրքմենական խոշորագույն գազա-

թողունակությունը առավելագույնը կկազմի օրական 1.1 մլն բարել: Նախագծի երեք փուլերից առաջին փուլի (մոտ 860կմ, այն «Թենգիզը» միացնելու է դադախական Կարյիկ նավթային նավահանգստին, կառուցումը պետք է ավարտվի 2010թ.) շինարարությունը գնահատվել է մոտ \$1.5 մլրդ: Ըստ ներկայացված հաշվարկների, եթե այս նախագիծը կյանքի կոչվի, ապա «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղի թողունակությունը, որն այսօր առավելագույնը գնահատվում է օրական մոտ 1 մլն բարել նավթ, կարող է կրկնապատկվել՝ հասնելով օրական 2 մլն բարելի:

¹ Աթասու-Ալաշանկու նավթամուղով այսօր օրական Չինաստան է հոսում մոտ 200 հազ. բարել նավթ:

հանքերից մեկի՝ «Բագթիյաուլիկի»¹ շահագործման իրավունքը, որի պաշարները գնահատվում են 1.3 տրլն մ³:

Ամերիկյան Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ, CIA) հրապարակած վերջին տվյալների համաձայն², որոնք, սակայն, առնչվում են 2006թ., Չինաստանի բնական գազի տարեկան սպառումը կազմել է 55.6 մլրդ մ³: Անշուշտ, ներկայում այդ թիվն ավելին է³, բայց ամեն դեպքում ներկայացված թվերը հուշում են, որ թուրքմենական 30 մլրդ մ³ բնական գազը ռազմավարական նշանակություն կունենա Չինաստանի էներգետիկ անվտանգության համար:

Երկաթգիծ

Ներկայում Կենտրոնական Ասիան արտերկրի հետ կապող 11 խոշոր երկաթգծերից 9-ը տանում են դեպի Ռուսաստան, մեկը՝ Թուրքմենստանից Իրան և վերջինը՝ Ղազախստանից Չինաստան: 2007թ. ընթացքում Պեկինը ձեռնամուխ եղավ Արևմտյան Չինաստանը Կենտրոնական Ասիայի հետ կապող երկու նոր երկաթգծերի շինարարությանը: Առաջինը չինական Կորգաս սահմանամերձ քաղաքը կապելու է դազախական խոշորագույն քաղաքի՝ Ալմաթիի հետ, իսկ երկրորդը՝ Չինաստանի ծայր արևմուտքում գտնվող Կաշի բնակավայրից Դղըզստանի տարածքով հասնելու է մինչև Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդ: Նախատեսվում է, որ երկու երկաթգծերն էլ պատրաստ կլինեն 2010թ.:

Թեև չին-կենտրոնաասիական այսօրվա առևտուրն իր մեծությամբ երկու կողմերի համար առաջնային չէ, սակայն Չինաստան-Կենտրոնական Ասիա երկաթուղային հաղորդակցության հզորությունների նման կտրուկ մեծացումն առնվազն ցուցիչ է, որ Պեկինում նպատակ ունեն փոխել այդ վիճակը կենտրոնաասիական երկրների համար՝ նրանց առաջարկելով Ռուսաստանի շուկայից իր արժեքով ավելի քան երեք անգամ մեծ չինական շուկան, չինական էժան ապրանքներն ու ծառայությունները և վերջապես չինական ուղիները՝ համաշխարհային օվկիանոս դուրս գալու ճանապարհին⁴:

Հետևություններ

Վերջին երեք տասնամյակում տպավորիչ հաջողությունների հասած չինական տնտեսության համար այսօր կարևորագույն խնդիրներից է էներգետիկ անվտանգության ապահովումը:

Չինաստանի պարագայում հարցը չի վերաբերում միայն նավթի ու բնական գազի գների այսօր շարունակվող աճին: Նկատի ունենալով չին-ամերիկյան ռազմավարական կարգի հակասությունները՝ Պեկինն իր համար լուրջ խնդիր է տեսնում էներգակիրների ներկրումն իրականացնել միայն ծովային ճանապարհով, ուր ամերիկյան ռազմածովային նավատորմը մի քանի անգամ առավել է չինականի նկատմամբ, և որը, արևմտյան ու ռուսական գնահատականների համաձայն, այդպես պետք է մնա առնվազն մի քանի տասնամյակ:

Պեկինում գրեթե նույն տիպի խնդիր են տեսնում նաև Ռուսաստանի պարագայում: Թեև այսօրվա ռուս-չինական հարաբերությունները մոտեցել են անգամ դաշնակցային կարգավիճակի, սակայն, բնականաբար, Պեկինի համար միշտ էլ նախընտրելի կլինի սեփական

¹ «Բագթիյաուլիկ» գազահանքը գտնվում է Թուրքմենստանի արևելքում՝ թուրքմենա-ուզբեկական սահմանին մոտ: Թուրքմենստան-Չինաստան կառուցվող գազամուղը չինական սպառողներին է միացնելու հենց այս և նույնպես Թուրքմենստանի արևելքում գտնվող «Մալայ» գազահանքերը:

² Ըստ այդ տվյալների՝ 2006թ. Չինաստանն արդյունահանել է 58.6 մլրդ մ³ բնական գազ, արտահանել՝ 2.87 մլրդ մ³-ը, իսկ ներմուծել, 0.97 մլրդ մ³: Տե՛ս, CIA, «The 2008 World Factbook» (էլեկտրոնային տարբերակի վերջին թարմացումը՝ հունիսի 19, 2008թ.):

³ Չինական կառավարության ընդունած ծրագրի համաձայն՝ նախատեսվում է մինչև 2010թ. ավելի քան երկու անգամ մեծացնել գազիֆիկացված բնակարանների թիվը: Այդ ցուցանիշով, սակայն, Չինաստանը շարունակում է աշխարհում գրավել ցածր տեղերից մեկը:

⁴ Բերենք մեկ օրինակ: 2007թ. չին-դազախական առայժմ միակ երկաթգծով տեղափոխված ապրանքների ծավալը մոտ 60%-ով ավելի է եղել, քան 2006թ.:

Էներգետիկ սնուցումն ապահովել մի տարածաշրջանից կամ երկրից, որի վրա կարողանա բանեցնել ռազմաքաղաքական կամ տնտեսական արդյունավետ ճնշում: Ինչը, հասկանալի է, առնվազն միջնաժամկետ կտրվածքով անիրական է Ռուսաստանի պարագայում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ պարզ է դառնում, որ այդ առումով

- մի կողմից՝ Պեկինում Կենտրոնական Ասիան պետք է դիտարկվի որպես առկա հնարավորություններից լավագույնը,
- մյուս կողմից՝ ներկայացվածը լուրջ հիմք է՝ կանխատեսելու, թե առաջիկայում չինական ներգրավվածությունը Կենտրոնական Ասիայում միայն աճելու է, և չպետք է զարմանալ, եթե պարզվի, որ Ռուսաստանը սխալվել էր տարածաշրջան չինական ներթափանցման սահմանները որոշելիս:

*Մարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ*

ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Կասպից ծովի ավազանում նավթի և գազի պաշարների մասին հարցը, թերևս, ռազմավարական նշանակություն ունի թե՛ տարածաշրջանի երկրների և թե՛ իրենց ազդեցության տարածման համար պայքարող տերությունների համար: Աշխարհի այս կամ այն տարածաշրջանը տերություններին հետաքրքրում է մի քանի պատճառով, օրինակ՝ աշխարհագրական դիրքի առումով, կամ, ասենք, էներգակիրների պաշարների առատությամբ: Հարավային Կովկասը և Կասպից ծովի ավազանն այս առումով յուրահատուկ են, քանի որ վերը նշված երկու չափանիշներով էլ համապատասխանում են գերտերությունների քաղաքական շահերին: Հարավային Կովկասն աշխարհագրական դիրքով խաչմերուկ է Եվրոպայի և Ասիայի համար, բացի դրանից, Արևմուտքի համար այն ելք է դեպի նավթով և գազով հարուստ Կասպից ծովի ավազան ու Կենտրոնական Ասիա: Նկատենք, որ Կենտրոնական Ասիան նույնպես աշխարհագրական դիրքով հետաքրքրի է ԱՄՆ-ի համար, քանի որ միակ տարածաշրջանն է, որը սահմանակից է այն երկրներին, որոնք հետագայում կարող են դառնալ թիվ 1 գերտերության՝ ԱՄՆ մրցակիցները: Հնարավոր մրցակիցներն են Չինաստանը, Հնդկաստանը և Ռուսաստանը: Այս երկրները թե՛ իրենց տարածքներով և թե՛ մարդկային ռեսուրսով ու տնտեսական հնարավորություններով լուրջ վտանգ են ներկայացնում ԱՄՆ-ի՝ թիվ 1 գերտերություն կոչվելու մենաշնորհին: Հասկանալի է, որ վերջինս դեռ երկար կպահպանի գերիզուրությունը, սակայն հնարավոր մրցակիցների դեմ պայքարելու համար արդեն այսօր քայլեր են կատարվում և փորձ է արվում վերահսկողություն սահմանել այն տարածքների վրա, որոնցով կարելի է հետագայում վերահսկել ողջ տարածաշրջանը:

Եվ այսպես, Հարավային Կովկասը հետաքրքրում է իր աշխարհագրական դիրքով՝ որպես խաչմերուկ և ելք դեպի Կասպից ծով ու Կենտրոնական Ասիա: Իսկ այս տարածաշրջանների հիմնական ու միակ հարստությունը նավթն ու գազն է, և հետևաբար՝ **նա ով կվերահսկի այդ հարստության արդյունահանումը և արտահանումը, նա էլ կվերահսկի ողջ տարածաշրջանը:** Եվ այսպես, Կասպից ծովի ավազանին տնտեսական ու նաև քաղաքական հետաքրքրություն տալու համար կարևոր էր պատասխանել այն հարցին, թե որքան նավթ և գազ կա:

Նկատենք, որ այս հարցի վերաբերյալ երկար տարիներ տարբեր կարծիքներ են եղել տարածաշրջանի երկրաբանական հետազոտությունների արդյունքների գաղտնիության կամ դրանց բացակայության պատճառով: Հետևաբար, ինչքան նավթ և գազ կա Կասպից ծովի ավազանում հարցի պատասխանը, կարելի է ասել, ռազմավարական նշանակություն ունեւր թե՛ տարածաշրջանի երկրների և թե՛ տերությունների ու նրանց շահերի շրջանակներում գործող նավթային ընկերությունների համար:

Նավթի պաշարները Կասպից ծովի ավազանում: ԽՍՀՄ քայքայումից և նորանկախ պետությունների ստեղծումից հետո այս հարցը ռազմավարական բնույթ ստացավ, քանի որ դրա պատասխանից էր կախված, թե ինչքանով են միջազգային նավթային ընկերությունները շահագրգռված տարածաշրջանով: Խորհրդային կայսրության քայքայումից հետո առաջ եկած Կասպյան նոր երկրները՝ Ադրբեջանը, Ղազախստանը և Թուրքմենստանը, նավթային ընկերությունների համար գրավիչ դառնալու համար, տարբեր հայտարարություններ էին անում՝ տարածաշրջանը կոչելով նոր Պարսից ծոց, հայտարարելով, որ այդ ծովի ընդերքում է կենտրոնացած նավթի համաշխարհային պաշարների մոտ 15 տոկոսը¹՝ փորձելով գոնե թղթի վրա մրցակցել արաբական նավթի հետ: Եվ թեև սկզբնական շրջանում այս հարցի կոնկրետ

¹ *Морские и нефтегазовые проекты*, География бизнеса: Северный Каспий, № 2 / 2006
http://www.mnpglobal.com/journal/2006_2/34

